ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 88

«25» 10 2022 թ. գ. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության պետ Անդրանիկ Մայիսի Սաղոյանի պաշտոնից ազատման և վարչության պետի պարտականությունների կատարումը նույն վարչության գլխավոր մասնագետ Լենա Ալեքսանի Ջիլավյանի վրա դնելու մասին ՀՀ գլխավոր դատախազի 2022 թվականի հոկտեմբերի 24-ի համապատասխանաբար՝ N 11/238-Ա և N 11/239-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է կատարել վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Կատարել Ա.Սաղոյանի կողմից՝ ՀՀ դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության վարույթների, փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Լ.Ջիլավյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Նավասարդյան Համայակ - ՀՀ դատախազության գլխավոր քարտուղար

Հանձնախմբի անդամներ՝

Մարտիրոսյան Հայկ -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ,
Ղահրամանյան Մարուշ -	ՀՀ դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար,
Գրիգորյան Ալինա -	ՀՀ դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության ավագ մասնագետ,
Շոխոյան Հարություն -	ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի մասնագետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2022 թվականի նոյեմբերի 7-ը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հոկտեմբերի 27-ին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ